



# ՄԻԳՐԱՑԻՈՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ

Հունիս 2018

Հատուկ թողարկում

ԱՅՍ ԹՈՂԱՐԿՄԱՆ ՄԵՁ

Եկե՛ք ծանոթանանք

1

Առաջիկա միջոցառումներ

8

Խնդրագիր

8

## Հունիսի 20-ին՝ Փախստականների միջազգային օրվան ընդառաջ, Ձեզ ենք ներկայացնում Միգրացիոն տեղեկագրի հատուկ թողարկումը

### ԵԿԵՔ ԾԱՆՈԹԱՆԱՆՔ...

Ներկայացնում ենք մեր հարցազրույցը Հարավային Կովկասում Միացյալ ազգերի կազմակերպության Փախստականների գերագույն հանձնակատարի (ՄԱԿ ՓԳՀ) տարաշաճրջանային ղեկավար պարոն Յոհաննես Վան Դեո Կլավի հետ



*Վերջին տարիների ընթացքում Հայաստանի ապաստանի և փախստականների ոլորտում զգալի զարգացումներ են արձանագրվել: 2016 թ-ի հունվարից ուժի մեջ է մտել <<Ապաստանի մասին>> նոր օրենքը, կատարելագործվել է ապաստանի համակարգը, փախստականների ներկայիս ինտեգրման քաղաքականությունն ընթացքի մեջ է՝ լրացնելու այս համակարգը, իսկ մոտ ապագայում նախատեսվում է կառուցել ապաստան հայցողների նոր կացարանը:*

*Ո՞րն է Ձեր կարծիքը այս բոլոր զարգացումների վերաբերյալ, ի՞նչ պետք է անել հետագա բարելավման համար: Եվ ինչպե՞ս եք տեսնում ՄԱԿ ՓԳՀ-ի աջակցությունը նոր կացարանի կառուցման գործում:*

Անշուշտ, Հայաստանը կարելուք առաջընթաց է արձանագրել վերջին տարիներին արդար և արդյունավետ ապաստան տրամադրելու գործընթացում: Հարևան երկրների նման, Հայաստանը աստիճանաբար վերածվում է նպատակակետ երկրի մեծ թվով ապաստան հայցողների և փախստականների համար Մերձավոր Արևելքից կամ այնպիսի հեռավոր տարածաշրջաններից, ինչպիսիք են՝ Ասիան և Աֆրիկան: 2016թ-ի ապաստանի մասին օրենքը մեծ հաշվով համահունչ է միջազգային և եվրոպական չափանիշներին, և Միգրացիոն պետական ծառայությունը (ՄՊԾ) լիովին գործառնական է և նպաստել է փախստականի կարգավիճակի որոշման որակյալ ընթացակարգի գործարկմանը: Դատարանները ստանձնել են իրենց պատասխանատվությունը ապաստանի հարցերում, որոնք հետագայում հանգեցրել են որոշ<sup>1</sup> նախադեպային որոշումների, ինչպիսին են օրինակ կրոնական հալածանքների հիման վրա ապաստան

ստանալու պահանջները: Ապաստանի որոշումների այնուամենայնիվ, ապահովագրված չէ ազգային անվտանգության նկատմամբ: Երկրի աշխարհաքաղաքական իրավիճակը, Լեռնային Ղարաբաղի չլուծված հակամարտությունը, Ադրբեջանի ու Թուրքիայի հետ սահմանի փակ լինելը, առաջացնում են անվտանգության մտահոգություններ և ազդում են ապաստանի որոշումների վրա: Օրինական անվտանգության մտահոգությունները պետք է հասցեագրվեն փախստականների և մարդու իրավունքների միջազգային օրենքի հետ համատեղ: ՄԱԿ ՓԳՀ-ն շարունակում է ապաստանի հարցերում գերազանց փոխհարաբերությունները հայաստանյան իշխանությունների՝ նախևառաջ ՄՊԾ դեկավարի և աշխատակազմի հետ: Սա հնարավորություն է տալիս ՄԱԿ ՓԳՀ գրասենյակին տրամադրել ՄՊԾ անձնակազմին շարունակական վերապատրաստում և ուսուցում, ապահովել իրավական խորհրդատվություն և ծագման երկրի համապատասխան տեղեկատվություն, ինչպես նաև վերահսկել ապաստանի որոշումների ընդունման տարբեր փուլերը, այդ թվում, դատարանների մակարդակով: ՄԱԿ ՓԳՀ-ն նաև համագործակցում է Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի հետ փաստաբանության, այդ թվում՝ օրենսդրական նախաձեռնությունների, վերապատրաստման և քրեակատարողական հիմնարկների մոնիտորինգի հարցերով, մինչդեռ Հանրային պաշտպանի աշխատակազմը «Առաքելություն Հայաստան» ՀԿ-ի իրավաբանների հետ միասին նաև անվճար իրավաբանական օգնություն է տրամադրում: ՄԱԿ ՓԳՀ-ն կանոնավոր աշխատանքային փոխանակումներ է իրականացնում ապաստանի հարցերով պատասխանատու բոլոր համապատասխան մարմինների հետ, ի թիվս ՄՊԾ-ի և դատարանների, դրանք անվտանգության ծառայության, սահմանային ոստիկանության և իրավապահ մարմինների աշխատակիցներն են՝ քննարկելու տարածքների հասանելիության և սահմանների կառավարման, ապաստանի գործընթացի հասանելիության, ազգային անվտանգության տեսանկյունից զգայուն հարցերը և փախստականի կարգավիճակի մերժման կամ տրամադրման հիմքերը: Պետք է հուսանք, որ ապաստանի գործընթացը հնարավոր կլինի դարձնել էլ առավել արդյունավետ և որակյալ, քանի որ ներկայումս որոշ ապաստան հայցողներ ստիպված են սպասել ամիսներ, եթե ոչ տարիներ, մինչև իրենց գործի վերաբերյալ վերջնական որոշում կայացնելը: Որոշակի դեպքերում առկա է առաջնահերթության տրամադրման անհրաժեշտություն, մասնավորապես այն դեպքերում, երբ կա հետապնդման հիմնավորված երկյուղ և ակնհայտ պաշտպանության անհրաժեշտություն: Հուսով ենք, որ իշխանությունները և դատական համակարգը կշարունակեն իրենց ռեսուրսների ներդրումը ապաստանի գործընթացում: Մենք նաև լիահույս ենք, որ

բոլոր ապաստան հայցողները կարող են օգտվել արդար և արդյունավետ գործընթացից, անկախ իրենց աշխարհագրական, կրոնական, էթնիկական կամ սոցիալական ծագումից: Մենք մաղթում ենք, որ իշխանությունները խուսափեն տարածք անօրինական մուտք գործելու պատժամիջոցների կիրառումից, եթե այդ մուտքն արվել է ապաստան հայցելու նպատակով: Շատ հաճախ նման իրավիճակներում մարդիկ ձերբակալվում են և դատապարտվում են երկարատև ազատազրկման դատարանի կողմից, մինչդեռ նրանց միակ ցանկությունը Հայաստանում ապաստան հայցելն է: Կառավարությունը ճիշտ է սահմանել երկրում ապաստան հայցողների ընդունման պայմանների բարելավման անհրաժեշտությունը: ՄԱԿ ՓԳՀ-ն ապաստան հայցողների համար նախատեսված նոր կացարանը (որի համար Կառավարությունը տրամադրել է հող, իսկ ICMPD-ն մշակել է կոնկրետ դիզայն, որը հիմք է ծառայում ֆինանսավորում հայթայթելու նպատակով դոնորներին համակարգված իրազեկելու համար) համարում է կարևոր միջոց՝ ապաստանի հայցողների հետագա վիճակի բարելավման, և ՄԱԿ ՓԳՀ-ն պարտավորվել է տրամադրել կահույք և սարքավորումներ կենտրոնի համար: Հույս կա նաև, որ հնարավոր դոնորները կաջակցեն այս կարևոր նախագծին: Ակնկալվում է, որ այս հաստատությունը կհամապատասխանի այսօրվա բոլոր ստանդարտներին և պահանջներին արժանապատիվ ընդունելություն կազմակերպելու համար, ներառյալ նաև տարբեր ծառայությունների տրամադրումը կամ ուղղորդումը: ՄԱԿ ՓԳՀ-ն կարծում է, որ սա մի փոքր ուշացած, բայց շատ դրական քայլ է Կառավարության կողմից և ակնկալում է հաստատության վաղաժամ բացմանը: Ներկայումս փորձ է արվում դոնորային միջոցներ հայթայթել շենքի կառուցման (ավարտի) համար: Ինչ վերաբերվում է ճանաչված փախստականների ինտեգրմանը, Հայաստանի իշխանությունները և հյուրընկալող հասարակությունը, ներառյալ ՄԱԿ ՓԳՀ-ի գործընկերները, մեծ աջակցություն են ցուցաբերել Սիրիայում հակամարտության պատճառով տեղահանված անձանց, հիմնականում հայկական արմատներ ունեցող, որոնք վերջին տարիներին ժամանել են մի քանի հազարներով: ՄԱԿ ՓԳՀ-ն և իր գործընկերները աշխատել են ջանասիրաբար աջակցություն ցուցաբերելով կառավարությանը՝ Հայաստանում

տանում փախստականների ինտեգրումը ապահովելու ուղղությամբ: Փախստականները իրենք էլ հաճախ գալիս են տարբեր արժանիքներով, տաղանդներով և հմտություններով, մասնավորապես այնպիսի բիզնես ոլորտներում, ինչպիսիք են տեղեկատվական եւ հաղորդակցման տեխնոլոգիաները, զբոսաշրջությունը, սնունդը և արվեստը: Նրանց հյուրընկալող համայնքները նպաստել են ռեսուրսների բաշխմամբ, օգնել նրանց գտնել բնակարաններ և աջակցել հանրային ծառայություններից օգտվելու հարցում: Կառավարությունը կարևոր քայլեր է ձեռնարկել ձեռնարկատերերի համար հարկային բեռը կրճատելու, փախստականների տնտեսական ներուժը խթանելու, նոր տնտեսական ոլորտների ստեղծմանը աջակցելու ուղղությամբ, ինչպիսին է օրինակ զբոսաշրջությունը, որտեղ փախստականները կարող են ներդնել իրենց փորձն ու փորձառությունը իրականացնելու համար: Այնուամենայնիվ, մենք տեսել ենք շատ անապահով ընտանիքների ժամանում ևս, ովքեր կարիք ունեն շարունակական ֆինանսական, սոցիալական և տնտեսական աջակցության: Կարևոր է, որ Կառավարությունը առ այսօր ի վիճակի չի եղել ապահովել սիրիահայ փախստականներին երկարաժամկետ կացարաններով: ՄԱԿ ՓԳՀ-ն և իր գործընկերները շարունակում են բացահայտել և տրամադրել վարձակալման սուբսիդավորման սխեմաներ, հաշվի առնելով, որ ոչ հայազգի փախստականները հավասարապես կարիք ունեն այդպիսի աջակցության: Սփյուռքի նախկին նախարարը ակտիվորեն աշխատել է էթնիկ սիրիահայ փախստականների համայնքի համար համապարփակ ինտեգրման ռազմավարության մշակման գործում, որին ՄԱԿ ՓԳՀ-ն և սփյուռքի կազմակերպությունները իրենց զգալի նպաստն են բերել: ՄԱԿ ՓԳՀ-ն հույս ունի, որ այս ռազմավարությունը կհաստատվի նոր Կառավարության կողմից, և որ այն հաշվի կառնի նախկինում ՄՊԾ-ի կողմից մշակված փախստականների ինտեգրման ռազմավարությունը և այդ ռազմավարությունը ի վերջո կիրառելի կլինի բոլոր փախստականների համար: Պետք է հաշվի առնել զարգացման գործակալությունների փորձը և ռեսուրսները, որպեսզի հնարավոր լինի կյանքի կոչել այս ռազմավարությունը, և բոլոր փախստականների համար՝ անկախ ազգային, էթնիկ կամ կրոնական համոզմունքներից

հասանելի դարձնել սոցիալ-տնտեսական ինտեգրման գործընթացը՝ նկատի ունենալով, որ ինտեգրումը երկկողմանի գործընթաց է և պահանջում է փախստականների անմիջական ներդրումը:

***Հաշվի առնելով Մերձավոր Արևելքում առկա անհանգիստ իրավիճակը և վերջինիս հարևանությունը Հարավային Կովկասի տարածաշրջանին, ի՞նչ էք կարծում, ի՞նչպիսի ազդեցություն կունենա այն Հարավային Կովկասի միգրացիոն դինամիկայի վրա և որո՞նք են այն միջոցները, որ տարածաշրջանի կառավարությունները պետք է առաջին հերթին նկատի ունենան:***



Այսօր աշխարհում մենք ականատեսն ենք լինում հարկադիր տեղահանման աննախադեպ մակարդակների՝ որպես հետևանք շարունակվող և տարածվող հակամարտությունների, ոչ միայն Մերձավոր Արևելքի տարածաշրջանում, այլև բոլոր մյուս մայրցամաքներում ևս: Նոր հակամարտությունները ծագում են, մինչդեռ հին հակամարտությունները շարունակում են մնալ անլուծելի բանակցությունների միջոցով, ինչպես որ մենք ականատես ենք լինում Սիրիայի, Ուկրաինայի, Աֆղանստանի, Եմենի, Հարավային Սուդանի դեպքերում: Միջազգային մարդասիրական իրավունքի և մարդու իրավունքների սկզբունքների նկատմամբ հարգանքը այսօրվա աշխարհում ավելի քիչ է, քան դա եղել է երկար ժամանակ: Հայաստանն ու Հարավային Կովկասը գտնվում են հակամարտության տարածաշրջանների (Սիրիա, Իրաք) հարևանությամբ կամ մոտ հիմնական խոշոր խառը միգրացիոն երթուղիներին (Իրանի եւ Թուրքիայի միջոցով): Հայաստանը և իր հարևան երկրները կարիք ունեն հզորացնեն իրենց կարողությունները, որպեսզի կառավարեն այդ տեղաշարժերը, որոնք ազդում են իրենց սահմանների և տարածքների վրա, ապահովելով, որ բոլոր նրանք, ովքեր կարիք ունեն պաշտպանության կգտնեն այդ <sup>3</sup>

պաշտպանություն, որի կարիքն ունեն, մինչդեռ միգրանտները, որոնք տեղաշարժվում են ավելի լավ կյանքի փնտրտուքով, պետք է կառավարվեն իրենց իսկ երկրի կայունության և անվտանգության սկզբունքներից ելնելով: Հարավային Կովկասի երկրները, ինչպես ամենուր, իրենց սահմանները և տարածքները պաշտպանելու նպատակով, պետք է բաց պահեն իրենց դռները բոլոր նրանց համար, ովքեր ստիպված են եղել փախչելու հալածանքներից, մարդու իրավունքների խախտումներից, էթնիկ հակամարտությունից և քաղաքացիական պատերազմից: Պաշտպանության մուտքի զգայուն համակարգերը և միգրացիոն քաղաքականությունները պետք է ներգրավեն տեղաշարժման մեջ գտնվող տարբեր խմբերի, և տարբեր արձագանքներ պետք է մշակվեն տարբեր մարդկանց խմբերի կարիքների համար, այսպես կոչված խառը տեղաշարժերի համար: Սա նաև նշանակում է, որ Հարավային Կովկասի երկրները պետք է ապահովեն, որ ցանկացած անվտանգային մտահոգության դեպքում, որը կարող է առաջանալ այն սպաստան հայցողների հետ, որոնք ժամանում են ջիհադիզմի և ռազմական ծայրահեղականությամբ հայտնի երկրներից, չեն խուսափի իրենց պաշտպանական պարտավորություններից: Ցավոք, մենք տարածաշրջանում տեսնում ենք ազգային անվտանգության մտահոգությունների հիմքով սպաստանի հայցերի մերժման միտում, առանց փախստականի կարգավիճակի որոշման չափանիշների և ընթացակարգերի պատշաճ կիրառմամբ: Անվտանգության մասին դասակարգված տեղեկատվության հիման վրա սպաստանի դիմումները մերժվում են, մինչդեռ փախստականների իրավունքի միջազգային դրույթների պատշաճ կիրառումը կարող է հանգեցնել փախստականի ճանաչմանը: Պետք է հիշել, որ միջազգային փախստականների օրենքը նախատեսում է պաշտպանության երաշխիքներ և մեխանիզմներ այն անձանց համար, ովքեր փախչում են հալածանքներից, հակամարտություններից և բռնություններից՝ հաշվի առնելով հյուրընկալող երկրների և նրանց համայնքների անվտանգությունը: Անվտանգությունն ու պաշտպանությունը պետք է գնան ձեռք ձեռքի, անհնար է մեկի գոյությունն առանց մյուսի: Անվտանգությունը զատելով պաշտպանությունից վնասում է երկուսին էլ: Երբ սպաստան հայցողները հետապնդման հիմնավոր վախով չեն ստանում համապատասխան պաշտպանություն, նրանք գնում են առաջ և կարող են հայտնվել սմազլինգի և թրաֆիքինգի ճիւղերում, իսկ նրանք, ովքեր կարող են վտանգ հանդիսանալ ազգային անվտանգությանը և հասարակությանը հայտնվում են անկանոն կարգավիճակում և կարող են ենթարկվել չվերադարձվելիության: Ուստի ՄԱԿ ՓԳՀ-ն խորհուրդ է տալիս պետություններին անվտանգության և պաշտպանության նկատմամբ ինտեգրված մոտեցում ցուցաբերել, ինչը նշանակում է, որ անօրինական մուտքը, առանց անհրաժեշտ փաստաթղթերի չպետք է ենթարկվի

պատժի, եթե ժամանած անձի նպատակը սպաստան հայցելն է: Շատ հաճախ նման իրավիճակում սպաստան հայցողները մեղադրվում են անօրինական սահմանային անցման համար և ձերբակալվում երկարատև ժամանակով: Պետությունները կարող են նաև կիրառել փախստականների մասին միջազգային օրենքում ամրագրված չվերադարձման սկզբունքը բացառող դրույթներ և բացառություններ, որոնք լիարժեքորեն հաշվի են առնում պետությունների և ընդունող համայնքների անվտանգության շահերը: Ընդունող երկրների անվտանգությունն ու փախստականների պաշտպանությունն սպահովելու ջանքերը ոչ միայն պետք է ձեռնարկվեն մուտքի վայրում, այլև ժամանելուց հետո. մի կողմից փախստականների և հյուրընկալող համայնքների հետ կապված կայուն ինտեգրացիոն ծրագրերը կարող են նպաստել արմատականացման հետևանքով առաջացած հնարավոր սպառնալիքների հակազդմանը, իսկ մյուս կողմից փախստականների և օտարերկրացիների նկատմամբ պոպուլիստական և թունավոր բանավեճերի կասեցմանը:

***Միրիայում կոնֆլիկտի սկսվելուց ի վեր Հայաստանը իր ամբողջ բնակչության թվի հարաբերակցությամբ հյուրընկալել է սիրիացի փախստականների երրորդ ամենամեծ թվաքանակը: Միրիացի փախստականների ինտեգրումը մի կողմից դժվարին է, սակայն մյուս կողմից այն կարելի է համարել որպես հաջող ինտեգրման լավ օրինակ: ՄԱԿ ՓԳՀ-ն մեծ դերակատարություն ունի այս գործընթացի մեջ՝ կանգնած լինելով Հայաստանի կառավարության կողքին օգնելու փախստականներին նոր կյանք ստեղծել Հայաստանում: Ինչպե՞ս էք Դուք կանխատեսում սիրիացի փախստականներին տրամադրվող հետագա աջակցությունը ՄԱԿ ՓԳՀ հայաստանյան գրասենյակի կողմից:***

Վերջին տարիներին հազարավոր սիրիահայ փախստականների ինտեգրումը հայկական հասարակության մեջ տեղի է ունեցել շատ հաջող համագործակցության արդյունքում Կառավարության տարբեր ճյուղերի, զարգացման ոլորտի դերակատարների, ինչպիսիք են եվրոպական, ամերիկյան, գերմանական և ավստրիական զարգացման հիմնադրամները և գործակալությունները, սփյուռքյան կազմակերպությունների, որոնցից են ՀԲԸՄ-ը և IDEA հիմնադրամը, միջազգային ֆինանսական կառույցների, քաղաքացիական հասարակության, ՀԿ ծառայություն մատուցողների և փախստականների միջև, ովքեր ստեղծել են միություններ և բիզնեսներ: Տնտեսական ինտեգրման մեջ հիմնադրվել են պետական և մասնավոր հատվածների համագործակցության համար նախատեսված հարթակներ, գործարար ցանցերը և արժեզրեզանքները ընդգրկել են փախստականների ներուժը, իսկ մասնագիտական որակավորումները և վերապատրաստման սխեմաները հարմարեցվել են սպասարկելու փախստականների կարիքները: Ընթացքը խթանելու համար ՄԱԿ ՓԳՀ-ն տա-

րածաշրջանային նախաձեռնության հիման վրա վարձել է խորհրդատուի ծառայություններ՝ մշակելու համար ՄԱԿ ՓԳՀ հետագա քայլերի ներդրումը ինտեգրացիոն գործընթացի մեջ, մասնավորապես տնտեսական զարգացման և ինտեգրման ոլորտում, ինչպես նաև տեղեկացնելու համար հետագա ներգրավումը գործընկերների կողմից: Այնուամենայնիվ, աջակցության ենթակա կարիքները դեռևս զգալի են, մասնավորապես՝ մատչելի և երկարաժամկետ կացարաններ գտնելու, ինչպես նաև արժանապատիվ աշխատանքի, որակյալ կրթության և առողջապահության հասանելիության ոլորտներում: ՄԱԿ ՓԳՀ-ն կշարունակի աջակցել զարգացման և սփյուռքյան դերակատարների, ինչպես նաև միջազգային ֆինանսական կառույցների ներգրավումը փախստականների սոցիալ-տնտեսական զարգացման մեջ, և այն չի սահմանափակվի միայն Սիրիայից ժամանած էթնիկ հայ փախստականներով, այլ կներառի բոլոր փախստականներին: Այն կշարունակի աջակցել փախստականների և տեղահանված բնակչության ներառումը ազգային զարգացման ռազմավարություններում և ծրագրերում, մասնավորապես «Հայաստանի զարգացման ռազմավարություն 2030»-ում, ընդգծելով նաև փախստականների ներդրումը և նրանց ներառելու անհրաժեշտությունը ռազմավարության պլանավորման և կիրարկման մեջ: ՄԱԿ ՓԳՀ-ն կաջակցի նոր Կառավարությանը Սիրիայից տեղահանված անձանց ինտեգրման համապարփակ ռազմավարության վերջնականացման հարցում և հուսով է, որ այն կիրառելի կլինի բոլոր փախստականների համար՝ ընդունելով, որ Սփյուռքի նախարարությունը կլինի գլխավոր դերակատար: Սոցիալ-տնտեսական խորհրդակցության արդյունքները, որը ՄԱԿ ՓԳՀ-ն հանձնարարել էր ավելի վաղ այս տարվա մեջ, կտեղեկացնի ռազմավարության և դրա հետագա գործողությունների ծրագրի մասին: ՄԱԿ ՓԳՀ-ն նաև կաջակցի ծառայություն մատուցող ՀԿ-ների գործունեությանը, ինչպիսիք են մասնագիտական դասընթացները, ներառյալ «Ինչպե՞ս վարել բիզնես Հայաստանում», ինչպես նաև միկրոֆինանսավորման և կենսապահովման դրամաշնորհների տրամադրմանը: ՄԱԶԾ և ՄԱԱԶԿ հետ մեկտեղ այն կաջակցի փախստական գործարարներին բարելավված շուկայական հասանելիության, ինչպես նաև աշխատանքի համապա-

տասխանեցման հարցերում: Տնտեսական ինտեգրման ուղղությունից բացի ՄԱԿ ՓԳՀ-ն և իր գործընկերները կկենտրոնանան մշակութային և սոցիալական կողմերի վրա՝ օգնության հասնելով երիտասարդ փախստականներին: Սա ներառում է երիտասարդների կարողությունների հզորացում՝ ուղորդված ներգրավվածության միջոցով, ինչպես նաև երիտասարդների ֆիզիկական և էմոցիոնալ բարեկեցությունը: Երիտասարդներն այլ կերպ են նայում իրերին և շատ կարևոր է հասկանալ իրենց տեսակետը: Երիտասարդները կարող են բացահայտել այլ երիտասարդների, ովքեր դժվարին իրավիճակում են, և նրանք կարող են օգնության հասնել նրանց, ում այլ դերակատարները դժվարությամբ կհասնեն: Վերջերս մենք ականատես եղանք երկրում տեղի ունեցող փոփոխության նշանավոր ժամանակաշրջանում երիտասարդների կարևոր դերակատարությունը, այդ թվում փախստական



երիտասարդների, ովքեր նոր վարչակարգից մեծ ակնկալիքներ ունեն: Փախստականների ինտեգրման ոլորտում, այդ թվում՝ սիրիահայ փախստանների, հատուկ ուշադրությանն են արժանի որակյալ առողջապահական ծառայությունների հասանելիությունը և մատչելիությունը, մինչդեռ հանրային ծառայությունները բացակայում են, ներառյալ առավել խոցելի անձանց համար, այդ թվում՝ ծերերի, հաշմանդամների և երեխաների, և որ ամենակարևորն է երկարաժամկետ բնակարային լուծումների տրամադրումն է, ներառյալ՝ սոցիալական բնակարանային ծրագրերը կամ սուբսիդացված բնակարանային վարկային սխեմաները, քանի որ փախստականների համար, հաստակապես՝ ավելի մեծ ընտանիքների համար պատշաճ կացարանի հայտնաբերումը շարունակում է մնալ առանցքային 5 մարտահրավեր:

**Վերջերս ընդունված Կայուն զարգացման նպատակների լույսի ներքո, որոնք են ՄԱԿ ՓԳՀ տարածաշրջանային գրասենյակի կարևորագույն առաջնահերթությունները և ի՞նչ ծրագրեր է այն նախատեսում իրականացնել մոտ ապագայում: Ձեր կարծիքով որո՞նք են ամենամեծ մարտահրավերները, որին ՄԱԿ ՓԳՀ տարածաշրջանային ներկայացուցչությունը բախվում է:**

Հարավային Կովկասում տարածաշրջանային ներկայացուցչությունը աջակցություն է տրամադրում տարածաշրջանում ՄԱԿ ՓԳՀ գործողություններին, այդ թվում՝ Հայաստանում, որպեսզի ապահովի փախստականների և այլ տեղահանված անձանց պաշտպանություն ստանալը և երկարատև լուծումների հասանելիությունը միջազգային ստանդարտներին համապատասխան, ինչպես նաև բոլոր շահագրգիռ կողմերի հետ համագործակցությամբ: ՄԱԿ ՓԳՀ մոտեցումը տեղահանության մարտահրավերների նկատմամբ այսօրվա տարածաշրջանում ներդաշնակեցվել է ՄԱԿ-ի այլ գործակալությունների ջանքերի հետ, ինչպես ամրագրված է Միավորված ազգերի կազմակերպության համագործակցությունը կայուն զարգացման նպատակների համար օրակարգում և երեք Հարավկովկասյան երկրներում Կառավարության ծրագրի մեջ՝ 2030թ. Կայուն զարգացման նպատակների ազգայնականացման համար: Այն մասնավորապես նպատակաուղղված է մարդափրակյան միջամտությունից սահուն անցում կատարելու զարգացման առավել լայն արձագանք, ներառյալ փախստականների, քաղաքացիություն չունեցող անձանց և տեղահանված անձանց այլ խմբերի համար: Տվյալների վրա հիմնված, ամուր պաշտպանության աջակցությունը և արձագանքը, մասնավորապես՝ ապաստանի ընթացակարգերի մշտադիտարկումը արդյունավետությունը, ՄԱԿ ՓԳՀ տարածաշրջանային ռազմավարության հիմնաքարն է, քանի որ այն տրամադրում է պաշտպանության անհատական և համայնքային ծառայություններ, ներառյալ իրավական և հոգեբանական աջակցություն: Տարածաշրջանային գրասենյակը տեսնում է նաև, որ ապաստան հայցողների, փախստականների և այլ տեղահանված անձանց կենսապայմանների բարելավմանը և պաշտպանությանն ուղղված ջանքերը, արդյունավետորեն աջակցվում են և ամբողջ տարածաշրջանում հիմնված են ներդաշնակեցված ստանդարտների և ընթացակարգերի հիման վրա: Տեղական ինտեգրման նախաձեռնությունները խթանելու նպատակով տարածաշրջանային ներկայացուցչությունը աջակցում է փախստականների, քաղաքացիություն չունեցող անձանց և այլ տեղահանված անձանց ընդգրկումը ազգային և տեղական զարգացման ծրագրերում, ինչպես նաև հանրային ծառայություններում: Հարավային Կովկասի բոլոր երեք երկրներում ՄԱԿ ՓԳՀ-ն աջակցում է փախստականների և այլ տեղահանված անձանց ներառումը այնպիսի ծրագրերում, որոնք ուղղված են կայուն զարգացման նպատակների ազգայնացմանը, համոզված լինելու համար, որ «ոչ ոք հետ չմնա» համատեղ

ջանքերով հասնելու կայուն զարգացմանը, խաղաղությանը, անվտանգությանը, մարդու իրավունքների հարգմանը և ամբողջ տարածաշրջանում բոլորի համար հավասար հնարավորություններին: Առնվազն փախստականները, այլ տեղահանված անձիք և քաղաքացիություն չունեցող անձիք պետք է ներառվեն համապատասխան նպատակներից յուրաքանչյուրի ներքո, ինչպիսիք են աղքատության կրճատումը, սննդի հասանելիությունը, առողջությունը, կրթությունը, էներգիան, գենդերային հավասարությունը, ինչպես նաև խաղաղ և ներառական հասարակությունների ստեղծումը: Հնարավոր է հատուկ ջանքեր անհրաժեշտ լինեն համոզվելու համար, որ ՄԱԿ ՓԳՀ մտահոգության առարկա հանդիսացող բնակչությունը ներառված լինի նախնական վիճակագրության, ՄԱԿ պաշտպանության փաստաթղթերի և ծրագրային գործիքների մեջ, որոնք ուղղված են աջակցելու ազգային կառավարություններին: Քանի որ ընդհանուր ծրագրային հարցերում տարածաշրջանի համար ստեղծվել են համապարփակ ռազմավարական շրջանակներ, պաշտպանական միջամտություններ և լուծումների մոտեցումներ, ինչպես նաև ռազմավարական հաղորդակցման և պաշտպանության աշխատանքներում, պետություններում տարբեր ծրագրեր շահում են առավել հետևողականությունից և համաձայնեցվածությունից, ուժեղացված պաշտպանական վերլուծությունից, լուծումների վրա ավելի սուր կենտրոնացումից, ինչպես նաև ամբողջ տարածաշրջանում հաղորդակցման հետևողականությունից: Որպես տարածաշրջանային ներկայացուցիչ, ես անհրաժեշտ է աջակցություն տրամադրեմ երկրի ներկայացուցիչներին՝ ամրապնդելու պաշտպանությունը պետական բարձր օղակների և ՀԿ-ների համար, ինչպես նաև լուծել այն մարտահրավերները, որոնց երկրի ներկայացուցիչները կարող են բախվել գործնական կառավարման, մարդկային կամ ֆինանսական ռեսուրսների օգտագործման մեջ: Տարածաշրջանային կառույցները ստեղծվել են մի շարք ծրագրային ոլորտներում, որոնք ապահովում են տեխնիկական աջակցություն, ինչպես նաև փորձի, հմտությունների, տեղեկատվության, վերլուծության և լավագույն փորձի պարբերաբար փոխանակում: Արտակարգ իրավիճակների պլանավորման և պատրաստվածության գործընթացներում, ինչպես նաև արձագանքման դեպքում տարածաշրջանային ներկայացուցչությունը տրամադրում է փորձառություն և ռեսուրսներ, ինչպես ցույց տվեց 2016թ. ապրիլին Լեռնային Ղարաբաղի հակամարտության սրման հետևանքով առաջացած տեղահանության ժամանակ: Եվ վերջապես տարածաշրջանային հանդիպումները և վերապատրաստումները, այդ թվում, որոնք կազմակերպված են «Որակի նախաձեռնության» (QIEE) կողմից առավել ընդլայնված տարածաշրջանի համար համախմբում են աշխատակիցների և արտաքին դերակատարների (կառավարություն, քաղաքացիական հասարակություն), որոնք ներկայացնում են միմյանց հետ հակամարտության մեջ գտնվող երկրներ: Դրանք յուրօրի-

րինակ հարթակ են ծառայում փոխըմբռնման և փոխադարձ հարգանքի համար:

**Քանի որ Դուք վերջերս Հայաստան եք ճանփորդել, հնարավորություն եք ունեցել ծանոթանալ հայկական մշակույթին, արժեքներին, տեղական ավանդույթներին, պատմությանը և բնությանը: Խնդրում ենք պատմել մեզ մինչ այժմ Ձեր տպավորությունների մասին:**

Արդեն մեկ ու կես տարի է ինչ էս մոտ եմ տարածաշրջանին և ամեն օր վայելում եմ այստեղ գտնվելը: Թեև աշխատանքը դժվարին է, իսկ հակամարտությունների և աղետների հետևանքով առաջացած տեղահանության խնդիրների լուծումները մոտ ապագայում նկատելի չեն, էս իմ ոգեշնչումն եմ ստանում մարդկանց հետ շփումից, այդ թվում նրանց հետ, ում մենք ծառայում ենք, ինչպես նաև այս տարածաշրջանի և պատմության մասին սովորելուց: Իմ Հայաստան այցելություններն ինձ ծանոթացրել են հրաշալի մարդկանց հետ, ովքեր ինձ հրավիրել են իրենց կյանք և տները, մասնավորապես պարոն Եզանյանը՝ Միգրացիոն պետական ծառայության պետը, ով ինձ տարել է անմոռանալի արշավների, ներառյալ Արագած լեռը: Ինձ պատահել է Երևանում լինել նաև վերջերս տեղի ունեցած խաղաղ զանգվածային ցույցերի ժամանակ և էս շատ տպավորված էի բնակչության վճռականությամբ խաղաղ կերպով աշխատել հավասար հնարավորությունների, ժողովրդավարության, թափանցիկության, ինչպես նաև ներառական հասարակությունների համար: Ամեն անգամ Հայաստան այցելելուց էս զգացված եմ, ինչպես է հայ ժողովուրդը հաղթահարում իր ցավագին անցյալը և ինչպես են նրանք վերափոխում իրենց ծանր կորուստը ուրիշների համար մարդասիրական գործողության, այդ թվում՝ հայերի համար, ովքեր վերադարձել են Սիրիայից և Իրաքից, որտեղ նրանք կրկին պատերազմի և հետապնդման զոհեր էին: Հայ ժողովուրդը տպավորիչ ձկունություն է ցուցադրում արմատավորված եզակի ինքնության, հարուստ և հնագույն մշակույթի մեջ: Քրիստոնեությունը որպես եկեղեցի առաջին անգամ հաստատվեց Հայաստանում, մինչդեռ երկիրը հյուրընկալում է անձանց բոլոր դավանանքներից: Ակադեմիական փարձառություն ունենալով համեմատական կրոնի ոլորտում, երկրում վանքեր և այլ կրոնական կառույցներ այցելելը ինձ համար թանկ են: Թույլ տվեք նաև այստեղ հույս հայտնել, որ ի վերջո մենք կգտնենք խաղաղ ճանապարհով լուծում Լեռնային Ղարաբաղի հակամարտությանը և համապատասխան ժամանակին ականատես կլինենք բարիդրացիական հարաբերությունների վերականգնմանը Թուրքիայի և Ադրբեջանի հետ: Մոտ ապագայում էս համոզված եմ, որ ներկայիս անցումային շրջանը, որի միջով Հայաստանն է անցնում կհանգեցնի ավելի ուժեղ, միասնական, դիմացկուն և բարգավաճ երկրի:

## **ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌՋԵՎ ԾԱՌԱՑԱՑ ԵՐԵՎ ԿԱՐԵՎՈՐԱԳՈՒՅՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ**

### **ՀՀ-ում ապաստան հայցողների համար նախատեսված նոր <<Հատուկ կացարան>>**

Ներկայիս <Հատուկ կացարան>-ը գործում է սկսած 2003թ.-ից: Կացարանի տարողունակությունը սահմանափակված է 45 անձով, և Սիրիայում ծագած հակամարտությունը ցույց տվեց, որ <Հատուկ կացարան>-ի հնարավորությունները խիստ հեռու են բավարար համարվելուց: ԵՄ ֆինանսավորմամբ և ՄԶՁՄԿ (ICMPD) հայաստանյան գրասենյակի կողմից իրականացվող <Աջակցություն միգրացիայի և սահմանների կառավարմանը> ծրագրի աջակցությամբ պատրաստ է նոր կացարանի նախագիծը: Կացարանը նախատեսված է 120 ապաստան հայցողների համար և համապատասխանում է միջազգային չափանիշներին: ՀՀ կառավարության կողմից այդ նպատակով հատկացվել է 2.5 հեկտար տարածք և ակնկալվում է շինարարությունն իրականացնել միջազգային կազմակերպությունների աջակցությամբ (արժեքը մոտավորապես 1.5 մլն եվրո): Մանրամասն՝ [ԱՅՍԵՆԷ](#):

### **1988-1992թթ Ադրբեջանից բռնագաղթված առավել կարիքավոր փախստական ընտանիքների բնակարանային ապահովություն**

1988-1992թթ Ադրբեջանից բռնագաղթված ընտանիքների բնակապահովության հարցով ՀՀ կառավարության դեռևս 2004թ-ին հաստատել էր ծրագիր, որի նպատակն էր մշտական կացարաններով ապահովել շուրջ 3264 փախստական ընտանիքներին, ովքեր բնակվում են հանրակացարաններում: Անցած տարիներին հնարավոր է եղել լուծելու նրանց գերակշիռ մասի հիմնախնդիրները և ներկայումս 895 ընտանիքներ, որից 641-ը՝ Երևանում, իսկ 254-ը՝ մարզերում շարունակում են սպասել իրենց համար այն երանելի օրվան, երբ իրենց կտրամադրվի սերտիֆիկատներ, որոնց միջոցով նրանք կկարողանան անշարժ գույքի շուկաներում ձեռք բերել բնակարաններ: Այդ ընտանիքները շուրջ 30 տարի շարունակում են բնակվել խիստ վատթար շենքային պայմաններում և հիմնախնդրի լուծման համար անհրաժեշտ է շուրջ 20 մլն \$:

### **Սիրիայից ժամանած փախստականների ինտեգրումը Հայաստանում**

Սիրիայում ճգնաժամով պայմանավորված սկսած 2013թ Հայաստանն ընդունել է ավելի քան 22.000 սիրիացի փախստականների, և 1000 բնակչի հաշվով այդ ցուցանիշով Հայաստանը եվրոպական երկրների շարքում գտնվում է առաջին եռյակում: Փախստականների բացարձակ մեծամասնությունը էթնիկ հայեր են, և Հայաստանը զգալի ջանքեր է գործադրում իր միջազգային գործընկերների հետ նրանց Հայաստանում ինտեգրման նպատակով: Դա մի կողմից համահունչ է Հայաստանը աշխարհասփյուռ բոլոր հայերի հայրենիք հռչակված քաղաքականությունը, իսկ մյուս կողմից՝ խիստ արդարացված է տնտեսապես: Եվ վերջապես սիրիացիները այժմ են ընկնում գործարարությամբ զբաղվելու իրենց բարձր հմտություններով և նրանցից շատերը Հայաստանում այսօր իսկ հիմնել են իրենց սեփական գործը:

**Փախստականների միջազգային օրվա կապակցությամբ նախատեսվող միջոցառումները Հայաստանում**

**ԽՆԴՐԱԳԻՐ՝ ԿԱՆԳՆԵԼՈՒ ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ ԿՈՂՔԻՆ**

- ◆ Փախստականների Գերագույն Հանձնակատարի ուղերձի և Փախստականների միջազգային օրվան նվիրված մամլո հաղորդագրության տարածում
- ◆ **#Փախստականներիկողմից** խնդրագրի քարտզարշավի տարածումը ՋԼՄ-ների կողմից
- ◆ Հեռուստա/ռադիո/մամուլի հարցազրույցներ
- ◆ Թեմատիկ բաների և ցուցատախտակի պատրաստում ՄԱԿ-ի շենքում փակցնելու համար
- ◆ ՄԱԿ ՓԳՀ—Հայկական Կարիտաս համատեղ ծրագրերի ներկայացում եւ շոու
- ◆ ՄԱԿ ՓԳՀ—Հայկական Կարիտաս և գործընկեր ՇԿ-ներ- բացօթյա ձեռքի աշխատանքների տոնավաճառ
- ◆ Փախստականների միջազգային օրվան նվիրված միջոցառումներ ապաստան հայցողների և փախստականների մասնակցությամբ
- ◆ Դասախոսություններ և իրազեկման միջոցառումներ համալսարանի ուսանողների, կամավորների և տեղացի/փախստական երիտասարդների համար
- ◆ Բացօթյա համերգներ տեղահանված Սիրիահայերի և տեղացի երաժիշտների, և փախստականների մասնակցությամբ
- ◆ Տեղահանված երիտասարդների եւ կին ձեռնարկատերերին ներկայացնող երկու փոքր տեսանյութերի մշակումը
- ◆ Այլ միջոցառումներ

Հիմա ավելի քան երբեք մենք պետք է կանգնենք **#Փախստականներիկողմից**:  
Միացե՛ք 1,895,102 մարդկանց, ովքեր խոստացել են իրենց աջակցությունը:

Ստորագրի՛ր **#WithRefugees** խնդրագիրը:  
“Դրսևորի՛ր համերաշխություն փախստականների հանդեպ:  
Յուրաքանչյուր օր պատերազմը հազարավոր ընտանիքների ստիպում է լքել իրենց տներն: Այդ մարդիկ իմ ու քո պես մարդիկ են: Բռնությունից խուսափելու և իրենց կյանքը փրկելու համար նրանք ամեն ինչ են թողնում-հեռանում, ամենն, ինչ որ ունեն, փայփայելով հույսեր և երազանքներ առավել ապահով ապագա ունենալու համար: ՄԱԿ-ի Փախստականների հարցերով գերագույն հանձնակատարը գտնում է, որ բոլոր փախստականներն արժանի են ապրել ապահով ու անվտանգ կյանքով:

Ավելացրու քո անունը **#WithRefugees** խնդրագրի մեջ՝ հստակ ուղերձ հղելու որոշում կայացնողներին առ այն, որ իրենք պետք է համերաշխություն և ընդհանուր պատասխանատվություն դրսևորեն:

- Խնդրագիրը որոշում կայացնողներից հայցում է.
- *Ապահովել յուրաքանչյուր փախստական երեխայի կրթությունը:*
  - *Ապահովել, որ յուրաքանչյուր փախստական ընտանիք ապրի ապահով:*
  - *Ապահովել, որ յուրաքանչյուր փախստական կարողանա է աշխատել կամ սովորել նոր հմտություններ՝ իր ընտանիքին օգնելու համար:*

Մենք փախստականների կողքին ենք:  
**We stand Together with #WithRefugees**

*Քարտզարշավը կշարունակվի մինչև 2018 թ-ի փախստականների համար գլոբալ համաձայնագրի ընդունումը:*

**Ի նչ է նշանակում Փախստականների Գլոբալ Համաձայնագիրը**

2018 թվականին պետությունների ղեկավարները կժամանեն ՄԱԿ-ի կենտրոնակայան, որպեսզի ընդունեն փախստականների համաշխարհային ճգնաժամի կառավարման առավել կատարելագործված համակարգ: Փաստաթուղթը, որը կոչվում է **«Փախստականների գլոբալ համաձայնագիր»**, վերաբերում է պատասխանատվությունների ճշգրիտ բաշխմանը, որտեղ հասարակության բոլոր հատվածները միասին կանգնած են **«#Փախստականներիկողմից»** յուրաքանչյուրը կատարելով իր մասնաբաժին աշխատանքը, որպեսզի զանգվածային հարկադիր տեղահանման բեռը չմնա միայն առանձին պետությունների վրա:



*Միգրացիոն տեղեկագիրը հրատարակվում է ՀՀ ՏԿԶՆ միգրացիոն ծառայության կողմից*